

ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2012 թվական

թիվ 98

քաղ. Մոսկվա

Մրցակցության կանոնների խախտումների ուսումնասիրություն անցկացնելու կարգի մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել մրցակցության կանոնների խախտումների ուսումնասիրություն անցկացնելու կարգը (կցվում է):

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածներով նախատեսված պահանջների կատարման փաստն ամրագրող որոշումն ընդունելուց եւ գաղտնի տեղեկությունների պաշտպանության կարգը սահմանող ու դրա հրապարակման համար պատասխանատվություն նախատեսելու մասին համաձայնագիրը գործողության մեջ դնելուց հետո՝ նշված ակտերն ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամները՝

**Բելառուսի
Հանրապետությունից**

**Ղազախստանի
Հանրապետությունից**

**Ռուսաստանի
Դաշնությունից**

Ս. Ռումաս

Կ. Կելիմբետով

Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի
նոյեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ

ԿԱՐԳ

մրցակցության կանոնների խախտումների ուսումնասիրություն անցկացնելու

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգը մշակվել է «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 15-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա եւ կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից Համաձայնագրի III բաժնում սահմանված մրցակցության կանոնների խախտումների ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում (այսուհետ՝ մրցակցության կանոններ):

2. Մրցակցության կանոնների խախտումների ուսումնասիրությունը (այսուհետ՝ ուսումնասիրություն) անցկացվում է հետեւյալ նպատակներով՝

մրցակցության կանոնների խախտման հատկանիշների սահմանում,

այն տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) սահմանում, որոնց գործողություններում ներառվում են (նախատեսվում են) մրցակցության կանոնների խախտման հատկանիշներ:

3. Ուսումնասիրություն անցկացնելու համար հիմք են՝

ուսումնասիրություն անցկացնելու մասին որոշումը, որն ընդունվել է «Մրցակցության կանոնների խախտումների մասին դիմումները (նյութերը)

քննության առնելու մասին» կարգին համապատասխան մրցակցության կանոնների խախտումների մասին դիմումների (նյութերի) քննության արդյունքում,

Հանձնաժողովի կողմից մրցակցության կանոնների խախտումների հնարավոր հատկանիշների բացահայտումը:

4. Սույն Կարգում կիրառվում են Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված հասկացությունները:

II. Ուսումնասիրություն անցկացնելը

5. Ուսումնասիրությունն անցկացվում է Հանձնաժողովի այն աշխատակիցների կողմից, որոնք նշված են «Մրցակցության կանոնների խախտումների մասին դիմումները (նյութերը) քննության առնելու մասին» կարգին համապատասխան ընդունված՝ ուսումնասիրություն անցկացնելու մասին որոշման մեջ:

Ուսումնասիրությունն անցկացվում է ուսումնասիրություն անցկացնելու մասին որոշումը ստորագրելու օրվանից սկսած՝ 60 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

6. Տեղեկությունների անբավարարության պատճառով մրցակցության կանոնների խախտման հատկանիշների առկայության կամ բացակայության մասին եզրակացություն անելու անհնարինության դեպքում լրացուցիչ տեղեկություններ հավաքագրելու եւ վերլուծելու նպատակով Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման համար պատասխանատու կոլեգիայի անդամն իրավունք ունի երկարաձգելու ուսումնասիրություն անցկացնելու ժամկետը, բայց ոչ ավելի, քան 60 աշխատանքային օրով: Ուսումնասիրություն անցկացնելու ժամկետի երկարաձգման մասին գրավոր ծանուցվում է դիմումատուն եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի այն անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություններ) պետական իշխանության մարմինները, որոնց իրավասության մեջ է մտնում մրցակցային (հակամենաշնորհային)

քաղաքականության իրականացումը (այսուհետ՝ լիազոր մարմիններ)՝ անկախ դիմումը (նյութերը) քննության առնելու հիմքից:

III. Տեղեկություններ տրամադրելու մասին հարցումը

7. Ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման համար պատասխանատու Հանձնաժողովի կոլեգիայի անդամն իրավասու է ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, անդամ պետությունների պետական իշխանության մարմիններից գրավոր պահանջելու այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ուսումնասիրությունն անցկացնելու համար, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ:

Հարցման մեջ նշվում են հարցման իրավական հիմքերը, նպատակը, պահանջվող տեղեկությունները, ինչպես նաեւ տեղեկությունները ներկայացնելու ժամկետը:

8. Ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ անդամ պետությունների պետական իշխանության մարմինները պարտավոր են սահմանված ժամկետում գրավոր ներկայացնել հարցվող տեղեկությունները, այդ թվում՝ գաղտնի տեղեկությունները:

Կարող են ներկայացվել ինչպես փաստաթղթերի բնօրինակները, այնպես էլ պատճենները:

Իրավաբանական անձի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն ղեկավարի կամ լիազորված անձի ստորագրությամբ եւ իրավաբանական անձի կամ լիազորված անձի կնիքով, ֆիզիկական անձի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ ֆիզիկական անձի կամ լիազորված անձի ստորագրությամբ: «Լիազորված անձ» ասելով պետք է հասկանալ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը լիազորված է որոշակի գործողություններ իրականացնելու համար՝ համապատասխան անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Հանձնաժողով ներկայացված գաղտնի տեղեկությունները պաշտպանելու կարգը եւ դրանք հրապարակելու համար Հանձնաժողովի աշխատակիցների պատասխանատվությունը սահմանվում են անդամ պետությունների համապատասխան համաձայնագրով:

10. Համաձայնագրով նախատեսված հարցվող տվյալները (տեղեկությունները) Հանձնաժողով չներկայացնելը, ինչպես նաեւ ակնհայտորեն անարժանահավատ տվյալներ (տեղեկություններ) ներկայացնելը հիմք են հանդիսանում տուգանային պատասխանատվության միջոցներ կիրառելու համար, որոնք նախատեսված են Համաձայնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետով: Նշված տուգանային պատասխանատվության միջոցներ կիրառելն իրականացվում է Տուգանքների հաշվարկման մեթոդաբանության եւ նշանակման կարգի համար սահմանված կարգով, որը նախատեսված է Համաձայնագրով:

IV. Ուսումնասիրություն իրականացնելու արդյունքները

11. Ուսումնասիրություն իրականացնելու արդյունքների հիման վրա Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման համար պատասխանատու կոլեգիայի անդամն ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը՝

մրցակցության կանոնների խախտման մասին գործ հարուցելու եւ այն քննության առնելու մասին,

մրցակցության կանոնների խախտման մասին գործ հարուցելը մերժելու մասին,

դիմումը (նյութերը) լիազոր մարմիններին ըստ ենթակայության փոխանցելու մասին:

Եթե որոշումը կազմվում է բնական մենաշնորհների սուբյեկտ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի առնչությամբ ներկայացված դիմումը (նյութերը) քննության առնելու արդյունքների հիման վրա, ապա այն համաձայնեցվում է Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքների հարցերի համար

պատասխանատու կոլեգիայի անդամի հետ՝ այն ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

12. Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործ հարուցելու եւ այն քննության առնելու մասին որոշման մեջ նշվում է՝

- դիմումատուի մասին տվյալներ,
- պատասխանողի մասին տվյալներ,
- գործը քննության առնելու ամսաթիվը,
- գործ հարուցելու համար հիմքը,

Համաձայնագրի այն նորմերը, որոնց առնչությամբ հայտնաբերվել են խախտման հատկանիշներ,

մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործի քննության հարցերով հանձնաժողովի կազմը, որը ստեղծվում է Մրցակցության կանոնների խախտման մասին գործի քննության կարգին համապատասխան:

13. Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործ հարուցելու եւ այն քննության առնելու որոշում ընդունվում է այն դեպքում, երբ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են մրցակցության կանոնների խախտման հատկանիշներ:

14. Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործ հարուցելը եւ այն քննության առնելը մերժելու մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) գործողություններում բացակայում են մրցակցության կանոնների խախտման հատկանիշները: Ընդ որում՝ նշված որոշումը պետք է ներառի գործի հարուցումը մերժելու հիմքը:

15. Դիմումը (նյութերը) լիազոր մարմիններին ըստ ենթակայության փոխանցելու մասին որոշում ընդունվում է, եթե ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում հայտնաբերվել է, որ քննվող խախտումը Հանձնաժողովի իրավասության շրջանակից դուրս է, եւ կատարված ուսումնասիրության հիման վրա արվել է եզրակացություն անդամ պետության (անդամ պետությունների) մրցակցային

(հակամենաշնորհային) օրենսդրության խախտման հատկանիշների առկայության մասին:

Որոշմանը կցվում է դիմումը (նյութերը), փաստաթղթեր եւ տեղեկություններ, որոնք հիմք են հանդիսացել դիմումը (նյութերը) լիազոր մարմիններին փոխանցելու մասին որոշում ընդունելու համար:

16. Սույն կարգի 11-րդ կետում նշված որոշումն ընդունելու ամսաթիվ է համարվում Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման համար պատասխանատու կոլեգիայի անդամի կողմից այն ստորագրելու ամսաթիվը:

17. Սույն Կարգի 11-րդ կետում նշված որոշման պատճենն ուղարկվում է դիմումատուին, ինչպես նաեւ լիազոր մարմիններին՝ անկախ ուսումնասիրությունն անցկացնելու հիմքից, դրա ստորագրման օրվանից 3 աշխատանքային օրերի ընթացքում, ցանկացած մատչելի եղանակով, որի միջոցով հնարավոր է հաստատել, որ որոշումը հասել է դիմումատուին եւ լիազոր մարմիններին:

Եթե նշված որոշումը կազմվել է բնական մենաշնորհների սուբյեկտ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ անցկացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ապա դրա պատճենն ուղարկվում է Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքների հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամին՝ այն ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

18. Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերի նյութերի նախապատրաստումն իրականացնում է Հանձնաժողովի կառուցվածքային այն ստորաբաժանումը, որն ապահովում է քննության անցկացումը եւ մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերի նյութերի նախապատրաստումը:
